

ՀԱՇԿԵՐՈՅԹ

Ի ՊԱՏԻԻ ՄԱՔ ԻՆՆԷՍ ԱՐՔ Ի

Լոնսոնի Ս. Սարգիս եկեղեցւոյ երանա-
կալութեան, Համայնական եւրոպայի եւ
Բարեգործականի վարչութեանց կողմէ Օ
գոստոսի 13ին, 1958, Քենդինկըրրն Փալատ
Հօթելին մէջ նաեկերոյ մը տնօրէն է ի պա-
սիս երուսաղէմի Անկլիկան Արքեպիսկոպոս
Մաք Իննէսի եւ իր Տիկնոջ:

Ճաշկերոյի ներկայ եղած են Անկլիկան
եկեղեցիի ներկայացուցիչներ եւ Լոնսոնի
մեր ազգայիններէն շատեր:

Ճաշկերոյի առաջին խօսուողը եղած է
Անկլիկոյ Հայոց Կաթողիկոսական Պատուի-
րակ Տ. Պատկ Եղա. Թումայեան, որ ջատա-
գովականը բրած է Անկլիկան եւ Հայ եկե-
ղեցիներու սիրալիք յարաբերութեանց եւ իր
խօսքին վերջաւորութեան անգրադարձած Տ.
Տիրան Արքեպ. ի անձին եւ գործունեու-
թեան մասին, բաւելով Իբրաքան Հօր անա-
բնութիւններն ու կորովի եւ շինարար գոր-
ծունեութիւնը, որուն ներկաները իրենց
համամտութիւնն ու համակրութիւնը յայտ-
նած են իրենց ծախսահարութիւններով:

Տ. Պատկ Եղա. եւս խօսք առած է օր-
ուան պատուոյ հիւրը՝ Մաք Իննէս Արքեպիս-
կոպոս: Իր շնորհակալական խօսքերէն եւս,
ան երկարօրէն անգրադարձած է եւ ծան-
րացած քննաներապէս Հայոց եկեղեցւոյ եւ
Անկլիկան եկեղեցիներու միջեւ տեղի ունե-
ցող բարեւոյ փոխ-յարաբերութեանց մասին՝
ի մասնաւորի երուսաղէմի մէջ: Մաք Իննէս
Արքեպ. իր խօսքի աւարտին յայտնած է իր
անկեղծ եւ արտաբերական համակրութիւնը Տ.
Տիրան Արքեպիսկոպոսի անձին եւ գործու-
նեութեան հանդէպ:

Փառաւոր հիւրասիրութենէ մը եւս, ներ-
կանները այդ ջերմ մրնոյրտեն մեկնած են
հոգեկան մեծ գոհունակութեամբ:



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Երուսաղէմ, 26 Սեպտ. 1958

Նորին Վեհ. Հիւսէյն Թադաւոր

Ամման

Յամուն իմ, Ս. Յակոբեանց Միաբա-
նութեան եւ Յարգանքով հայ համայնքին,
կուգամ Ձեր Վեհախառնութեան ներկայացնել
ջերմագին շնորհաւորութիւններ՝ Մարգարէի
ծննդեան տօնին առիթով, վերանորոգելով
մեր հաւատարմութիւնը Հաշիմական Դանիւն:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԷԱՃԵԱՆ

Ընդհ. վարիչ Գործոց Ս. Արքաւոյ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Եր. 30 Օգոստոս, Շաղախար Ս. Էջմիածնի
տօնին առթիւ, Նախատեսակը եւ օրուան Ս. Պա-
տարագը տեղի ունեցան Մայր Տաճարին կից՝ Ս.
Էջմիածնի եկեղեցիին մէջ:

— Վերափոխման Նախարարի առթիւ, Կ. վ.
տեղի ունեցաւ «Հրաշափառ»-ով մուտք Գեթսե-
մանի Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշար-
ւեցան ժամերգութիւնը եւ Նախատեսակը՝ Գեր. Տ.
Շնորհք եպս. Կ. Նախարարութեան:

— Իրիկեացիներ, շահուած Նախարարութիւնը,
որ ուրիշ տարիներ կը կատարուէր Նոյն եկեղեց-
ւոյ մէջ, օրուան մէջ պատահած ջնջիչ դէպքին
հետեւնքով (տես Պաշտօնական Հաղորդագրու-
թիւնը) տեղի ունեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տա-
ճարին մէջ:

● 31 Օգոստոս, Կիրակի, Վերափոխման տօնին
առթիւ, ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժե-
րով մեկնեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ
եկեղեցիին, ուր «Հրաշափառ»-ով հանդիսաւոր
մուտքէն ետք, Տիրաւոր Ս. Գերեզմանին վրայ
հանդիսաւորապէս Ս. Պատարագ մատուց Գեր. Տ.
Շնորհք եպս. Գաղուստեան, եւ քարոզեց յետ ընդ
քո իսկ անձն անցցէ սուր...» (Դուհ., Բ., 35)
ընտրանով:

— Գեր. Սրբազանը Նախարարեց Նախ կէսօրէ
վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդա-
տան»-ին եւ Նախատեսակին:

— Այս իրիկունէն սկսեալ, Աստուածածնայ
Գ-օրեայ տօններու ամբողջ ընթացքին, Մայր Տա-
ճարին մէջ կատարուեցաւ «Եկեղեցի» յատուկ
ժամերգութիւն: Սոյն «Հսկումները» շարունակ-
ուեցան Գ օրերէն վերջ շարաթը մէկ անգամ,
ամէն Հինգշաբթի: